Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

10997

3 КЮП
П-28

Հ. Լ. Կ. ՅԵ. Մ. Կ. Կ.-ԻՆ ԿԻՑ ՊԱՏԱՆԻ
ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ

# ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ

## ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ЗКНОП
Դ-28

ՅԵՐԵՎԱՆ — 1925.

17 JUL 2013
10997
24 SEP 2006
1 DEC 2009
КПОП
1-28
Ս/Ի

Հ. Լ. Կ. ՅԵ. Մ. Կ. Կ.-ԻՑ ԿԻՅ
ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ

370
Ղ257-Պա
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
7/XI 1922
Ереван, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
15645

# ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԸՆԿ. ԼԵՆԻՆԻ ԱՆՎԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԵՐԵՎԱՆ—1925

ՍԽՏ
ԱՐ-ՀԲԲ

Գրառեալվար № 2021. Տիրաժ 3000.

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում.

## Ա.

Աճող սերունդի կոմունիստական դաստիարակության և նրանից հետագայում կոմունիստական հասարակարգի մարտիկներ ու կառուցողներ պատրաստելու նպատակով, կոմյերիտմիությունը, կոմկուսի ղեկավարությամբ ստեղծում է պատանի պիոներներ ի ը. Լենինի անվան ստատանեկական կոմունիստական կազմակերպություն: Պրոֆմիությունները և լուսժողկոմի մարմինները, վորպես անմիջապես շահագրգռված կազմակերպություններ, մասնակցում են այդ աշխատանքում և աջակցում են կոմյերիտմիությանը, չստեղծելով իրենց կից հատուկ պատանեկական կազմակերպություններ։

## Բ

## ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՁԵՎԵՐ

### I Կազմակերպության կազմը, ընդունելության և արտաքսման կարգը

1. Պատանի պիոներների կազմակերպության մեջ ընդունվում են աշխատավորների և առաջին հերթին բանվորների և գյուղացիների 8—16 տարեկան հասակ ունեցող յերեխաները։

2. Նոր պիոներների ընդունելությունը կատարվում է կոլեկտիվի խորհրդի միջոցով և վերջնականապես հաստատվում կոլեկտիվի ընդհանուր ժողովի կողմից։

3. Վոչ պակաս յերկու ամսից հետո պիոներական որենքները, սովորությունները իմացող նորեկը տալիս է հանդիսավոր յերդում և սրտանում է պիոներական նշան։

4. Պիոների արտաքսումը կատարվում է ողակի, կոլեկտիվի խորհրդի վորոշմամբ, կոլեկտիվի ընդհանուր ժողովի հաստատումից հետո, պիոներական որենքների սովորությունների խախտման և կարգապահությանը չյենթարկվելու համար։

## II Տերմինալոգիա

1. Խորհրդային Միության բոլոր պատանեական կազմակերպությունները կոչվում են «պատանի պիոներների ը. Լենինի անվան պատանեական կոմունիստական կազմակերպություն»։

2. Կազմակերպության սկզբնական բջիջը կոչվում է «կոլեկտիվ»։

3. Կոլեկտիվը բաժանվում է 10 հոգուց բաղկացած խմբերի, վորոնք կոչվում են «ողակ»։

4. Կոլեկտիվի ղեկավարը կոչվում է «կոլվար»:

5. Ողակի ղեկավարը՝ «Ողակավար»։



## III Կոլլեկտիվ

1. Պատանի պիոներների կազմակերպության սկզբնական բջիջը—կոլեկտիվը կազմակերպվում է արդյունաբերական ձեռնարկին կից, ակումբում, մանկատանը և գյուղում՝ Լ. Կ. Յե. Մ. բջիջին կից։

2. Կոլեկտիվը պետք է ընդգրկի 40-ից—50 յերեխա՝ ձուլված, շարժուն և ճկուն միավոր լինելու համար։ Տվյալ հիմնարկության կից մեծ թվով յերեխաներ ընդգրկելու համար, կազմակերպվում են ուրիշ կոլեկտիվներ, վորոնք ունեն մի ընդհանուր խորհուրդ բաղկացած բոլոր կոլվարներից և մեկ ընդհանուր ղեկավարից։ Վերջինը պատասխանատու յե բոլոր կոլեկտիվների աշխատանքների համար։

3. Կոլեկտիվի աշխատանքները ղեկավարելու համար, կոմյերիտմիության համապատասխան բջիջը նշանակում է կոմյերիտականներից կոլվար, վորը հաստատվում է կոմյեր. միութ. կոմիտեյի կողմից։

4. Կոլվարին ոգնելու համար կոմյերիտմիության բջիջը նշանակում է ոգնական, վորը հաստատվում է դարձյալ կոմյերիտմիության կոմիտեյի կողմից։

5. Կոլեկտիվը ղեկավարվում է կոլեկտիվի խորհրդի կողմից, վորի մեջ մտնում են ողակավարները, կոլվարը, նրանց ոգնականները, կոմ-

յերիտվիության բջջի բյուրոի ներկայացուցիչը, ըստ հնարավորության կուսակցության անդամ։ Կոլեկտիվի խորհուրդը տանում է կոլեկտիվի առորյա աշխատանքները, վարում է պիոներների ընդունելության և արտաքսման գործը, հետևում է կոլեկտիվի ներքին կարգապահությանը, լսում է համապատասխան ֆորպոստի զեկուցում և ղեկավարում է նրա աշխատանքը, քննում և հաստատում է կոլեկտիվի աշխատանքների ծրագրները, վորոնց գործադրությունը բաշխում է ըստ ողակների, միաժամանակ հանդիսանալով ողակավարներ պատրաստող դպրոց։

6. Կոլեկտիվի Խորհուրդը ընտրում է քարտուղար, վորը տանում է խորհրդի ժողովների արձանագրությունները, կոլեկտիվի որագիրը և խորհրդի կողմից հանձնարարած այլ աշխատանքներ։ Խորհրդի ժողովները վարում է հերթական նախագան։

7. Բացի այդ կոլեկտիվները ընտրում են տնտեսական, խմբագրական, գրադարան-ընթերցարանի և ուրիշ պարբերաբար վերընտրվող հանձնաժողովներ, վորոնք դարձյալ ղեկավարվում են խորհրդի կողմից նրա անդամների գլխավորությամբ։

8. Յուրաքանչյուր կոլեկտիվ կրում է հեղափոխական նշանավոր դեպքերի և ղեկավարների անուն, որինակ. «Փարիզյան Կոմմունա», «Հոկտեմբերյան հեղափոխություն», «Մայիս 1»-ը «Ռիկովի», և այլն։



9. Կոլեկտիվը պարբերաբար գումարում է ընդհանուր հավաքույթներ գանազան զրույցների, աշխատանքների, եկսկուրսիաների համար, նույնպես և ընթացիկ կյանքի կարևոր խնդիրները քննության առնելու. որինակ խորհրդի հաշվետու զեկուցումը, աշխատանքը դրպրոցում, մասնակցություն տոներին, կամպանյաներին, պիոներների ընդունելության և արտաքսման կոլեկտիվի խորհրդի վորոշումների հաստատումը։

## IV. Ողակ

1. Յերեխաներին ընտրելու ըստ մտերմության, հասակի, միաբան աշխատանքի հատկությունների, նրանց կոլեկտիվ աշխատանքներին և կարգապահությանը ընտելացնելու, աշխատանքը խմբակային մրցումներով տանելու և ղեկավարությունը դյուրացնելու նպատակով, կոլեկտիվը բաժանվում է 10-ական պիոներներից բաղկացած ողակների։

2. Ողակը իր պիոներներից ընտրում է ողակավար և ոգնական վորոնք վերընտրվում են 3 ամիսը մեկ անգամ։

3. Ողակը յուրացնում է հեղափոխական աշ-

խատանքային միտք կրող կամ հեղափոխական ղեկավարի անունը (Լենին, Ռիկով, Կալինին, Ստալին, Տրոցկի, Լունաչարսկի, կարմիր ոգաչու, կարմիր մեքենավար, ժուրճ, ժանգաղ և այլն)։

4. Ողակում տարվում են առորյա կոնկրետ աշխատանքներ, զրույցներ, ֆիզ-կուլտուրայի պարապմունքներ, աշխատանք արհեստանոցում, նախապատրաստություն բանակատեղիի, խաղեր, հասարակական և քաղաքական աշխատանքներ, պատրաստվում է նյութեր ամսագրին, լրագրին։

Ողակներում ամբողջ աշխատանքը տարվում է կոլվարի, նրա ոգնականի հսկողության տակ, վորոնք ողակավարների միջոցով անց են կացնում կոլեկտիվի խորհրդի վորոշումները և տալիս են իրենց ցուցմունքները։

## V. Հոկտեմբերիկներ

1. 8—11 տարեկան հասակ ունեցող յերեխաները առանձնացվում են հոկտեմբերիկների խմբակների մեջ։

2. Հոկտեմբերիկների խմբակը ունենալու յե 25 հոգուց վոչ ավել։

3. Խմբակը բաժանվում է 5 ողակի 5-ական հոգուց բաղկացած։



4. Հոկտեմբերիկների խմբակը ղեկավարում է կոլվարի ոգնականը։

5. Ողակը ղեկավարում է առանձնացված Հոկտեմբերիկը։

6. Հոկտեմբերիկները պիոներական նշան չեն կրում, բայց ունեն վզկապ։

## VI. Պատանի պիոներների գավառային, շրջանային, կազմակերպությունները և պատանի պիոներների գավ. բյուրո։

1. Շրջանային, քաղաքային, գավառային, մասշտաբով Պատանի պիոներների կոլեկտիվները միանում են շրջանային, քաղաքային, գավառային կազմակերպության մեջ լենկոմյերիտմիության համապատասխան կազմակերպության կից, լենկոմյերիտմիության համապատասխան կոմիտեյի ղեկավարությամբ։

2. Պիոներական կոլեկտիվը գործնականորեն ղեկավարելու համար՝ համապատասխան շրջաններում, լենկոմյերիտմիության տեղական կոմիտեն իրեն կից ստեղծում է պիոներական կազմակերպության գործնական ղեկավարող մարմին (շրջանային, գավառային պիոներական բյուրո) կոմիտեյի բաժնի հավասարազոր իրավունքներով։

Պատանի պիոներների բյուրոն, լենկոմյերիտմիության կոմիտեյի մի մասն է. ոգտվում է նրա ապարատից, չունի իր առանձին կնիքը, բլանկ, և այլն։ Պատանի պիոներների բյուրոն աշխատում է լենկոմյերիտմիության կոմիտեյի ցուցմունքներով ու ղեկավարությամբ։ Աշխատանքի բոլոր կարևոր խնդիրները հաստատվում են կոմիտեյի կողմից։

3. Բյուրոյի խնդիրներն են՝ կոլվարների հրահանգումը ու ղեկավարումը, կազմակերպչական և մեթոդիկ խնդիրների մշակումը, յերեխաների մասնակցությամբ կամպանյաների և տոների կազմակերպումը, դպրոցում և մանկապարտեզում պիոներների աշխատանքների ղեկավարումը, պիոներական կոնֆերանսների, խորհրդակցությունների գումարումը ծնողների, մանկավարժների, գործարանային կոմիտեների, գյուղ խորհուրդների և հասարակական այլ կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ պիոներական զանազան հանձնաժողովների աշխատանքների ղեկավարումը։ Գավառային, շրջանային բյուրոները պարբերաբար գումարում են իրենց նիստերը կոլվարների հետ միասին։

4. Պիոներական բյուրոյի կազմը պետք է լինի 5-7 հոգի։ Աշխատանքների միայուն գործնական ղեկավարության համար լենկոմյերիտմիության կոմիտեն իր անդամներից մեկին նշանակում է բյուրոյի նախագահ, վորը պետք է լինի կոմկուսի անդամ։ Բացի այդ բյուրոյի մեջ մտնում են կուսակցության կոմիտեյի, Պրոֆմիության, Լուսբաժնի, աշխատավորուհու բաժնի ներկայացուցիչները, և անհատապես ընտրված գործնական պիոներական աշխատողները։ Շրջանային, գավառային և կամ քաղաքային մասշտաբով (համապատասխան բյուրոյին կից) պարբերաբար գումարվում է ոգակավարների խորհրդակցություններ շրջանային, գավառային աշխատանքի խնդիրները լուծելու համար։ Այդ խորհրդակցություններում պիոներներից կազմվում են ֆոնդային անապատանների մեջ աշխատող, պատի լրագրների հրատարակման, պիկորական և այլ հանձնաժողովներ վորոնք աշխատում են բյուրոյի անմիջական ղեկավարությամբ։

## VII Պատանի պիոներների նահանգային կազմակերպությունները և նահ. բյուրոները

1. Տվյալ նահանգում գտնվող պատանի պիոներների բոլոր գավառային, շրջանային կազմակերպությունները համախմբվում են պատանի պիոներների Լենինի անվան նահանգային կազմակերպության մեջ։

2. Կոմյերիտմիության զավառային, շրջանային կոմիտեների աշխատանքը ղեկավարելու համար Ռ. Լ. Կ. ՅԵ. Մ. նահ. կոմիտեն ստեղծում է իրեն կից մինչև 11 հոգուց բաղկացած. պատանի պիոներների բյուրո։ Բյուրոն հանդիսանում է Նահանգկոմի բաժինը և աշխատում է նրա անմիջական ղեկավարությամբ։

3. Բյուրոի գլխին է կանգնած նախագահը՝ կոմյերիտմիության նահանգկոմի անդամ։ Բյուրոյի մեջ մտնում են կուսակցության Նահանգկոմի Լուսաբաժնի, Պրոֆմիության նահանգային խորհրդի, Առաբաժնի, Աշխատավորուհու բաժնի ներկայացուցիչները և Նահանգկոմի կողմից հատատված գործնական աշխատողները։

4. Նահանգ. Բյուրոն մեթոդիկ խնդիրները մշակելու համար, ստեղծում է իրեն կից մեթոդական հանձնաժողով, հրավիրելով մանկավարժ կոմունիստներին։

5. Նահանգ. բյուրոն տեխնիկական ապարատ չունի, ոգտվում է Նահանգկոմի ապարատից։

6. Նույնպիսի բյուրոներ կազմակերպվում են աղգային և շրջանային (Область) մասշտաբով։

7. Ռ. Լ. Կ. ՅԵ. Մ. յերկրային կոմիտեներին կից ստեղծվում են պատանի պիոներների յերկրային բյուրոներ բաղկացած՝ նախագահից,



վորը Ռ. Լ. Կ. ՅԵ. Մ. յերկրային կոմիտեյի անդամ է, ներկայացուցիչներից՝ Ռ. Կ. Կ. յերկրային կոմիտեյի, պրոֆմիության յերկրային բյուրոի, կին բաժնի, առաբաժնի, տվյալ նահանգի պատ. պիոներների նահանգ. բյուրոի նախագահից, և անհատորեն ընտրված պիոներական գործնական աշխատողներից։ Պիոներական յերկրային բյուրոն անմիջականորեն ղեկավարվում է Ռ.Լ.Կ.ՅԵ.Մ. յերկրային կոմիտեյի բյուրոի կողմից։

8. Առորյա գործնական աշխատանքների համար. բյուրոն կարող է ընտրել 3 հոգուց վոչ ավելի բաղկացած պրեզիդիում։

## VIII Ս. Խ. Հ. Մ.-ի պատանի պիոներական կենտրոնական բյուրո

1. Պիոներական շարժման ասպարեզում Ռ.Լ.Կ.Յ.Մ. կոմիտեների աշխատանքներին գործնական ղեկավարություն ցույց տալու և աշխատանքի խնդիրները շահագրգրված հիմնարկների՝ (Լուսժողկոմի, Հողժողկոմի, Պրոֆմիության և այլ հիմնարկների) հետ համաձայնեցնելու, նույնպես և պատ. շարժման մեթոդական խնդիրները լուծելու համար Ռ. Լ. Կ. ՅԵ. Մ. Կենտկոմին կից նրա բյուրոյի անմիջական ղեկավարությամբ ստեղծվում է պատանի պիոներների կենտրոնական բյուրո՝ բաժնի իրավունքներով։

Կենտրոնական բյուրոյի մեջ մտնում են նախագահը՝ պատանեկական շարժման ասպարեզում մշտական աշխատող Ռ. Լ. Կ. ՅԵ. Մ. Կենտկոմի անդամ, ներկայացուցիչներ՝ Ռ. Կ. Կ. Կենտկոմի ագիտպրոպ բաժնի, աշխատավորուհու բաժնի, գլխոցդատավարի, Ա. Մ. Հ. Կ. Խորհրդի, Ֆիզկուլտի գերագույն Խորհրդի, Առժողկոմատի, ԿԻՄ-ի գործկոմի և Կենտկոմի կողմից անհատորեն ընտրված պիոներական գործնական աշխատողները։

2. Մեթոդիկ խնդիրները մշակելու համար, Կենտրոնական բյուրոին կից հիմնվում է մեթոդական կոլեգիա։

3. Կենտրոնական բյուրոն հրատարակում է հանդես յերեխաների և հանդես ղեկավարների համար։

4. Առորյա գործնական աշխատանքները վարելու համար, Կենտրոնական բյուրոն առանձնացնում է 5—7 հոգուց բաղկացած նախագահություն։

## XI Պատանի պիոներների որենքները

Պիոները հավատարիմ է բանվոր դասակարգի գործին—ԼԵՆԻՆԻ ավանդներին։

2. Պիոները կոմսոմոլիստի և կոմունիստի կրտսեր յեղբայրն է ու ոգնականը։



3. Պիոները ընկեր է ամրողջ աշխարհի պիոներներին և բանվորների ու գյուղացիների յերեխաներին։

4. Պիոները կազմակերպում է իր շրջապատի յերեխաներին և նրանց հետ մասնակցում շրջապատի կյանքին։ Պիոները բոլոր յերեխաներին որինակ է։

5. Պիոները ձգտում է գիտության։ Գիտությունը և կարելիությունը ուժ է բանվոր դասակարգի պայքարում։

## X Սովորություններ

1. Պիոները պաշտպանում է իր և ուրիշների առողջությունը. նա տոկուն է և աշխուժ։ Վեր է կենում առավոտը վաղ, խնամքով լվացվում, կատարում է մարզանք։

2. Պիոները իր և ուրիշների ժամանակը թանգ է գնահատում. իր գործը կատարում է արագ և խնամքով։

3. Պիոները աշխատասեր է և համառ. նա կարող է բոլոր պայմաններում աշխատել և գտնել ամեն տեսակի դրությունների դուրս գալու յելքը։

4. Պիոները հասարակական դույքին, գրքե-

ին, հագուստին և արհեստանոցի պիտույքներին խնայողաբար է վերաբերվում։

5. Պիոները չի ծխում, չի հայհոյում։

## XI Հանդիսավոր յերդում

Սահմանվում է հանդիսավոր յերդման հետևյալ ձևը։

Յես, Ս. Խ. Հ. Մ. պատանի պիոներս, իմ ընկերների առաջ տալիս եմ հանդիսավոր յերդում վոր՝

1. Կանգուն կը լինեմ բանվոր դասակարգի պայքարում, հանուն ամբողջ աշխարհի բանվորների և գյուղացիների ազատագրման։

2. Ազնիվ ու անշեղ կը կատարեմ ԻԼՅԻՉԻ պատգամները, պիոներական որենքներն ու սովորույթները։

## XII Հոկտեմբերիկների սովորույթները

1. Հոկտեմբերիկը ոգնում է պիոներներին, կոմյերիտականներին, կոմունիստներին, բանվորներին և գյուղացուն։

2. Հոկտեմբերիկը ձգտում է դառնալ պիոներ։



3. Հոկտեմբերիկը հետևում է իր մարմնի և հագուստի մաքրությանը։

4. Հոկտեմբերիկը սիրում է աշխատել։

## XIII Պիոներների և հոկտեմբերիկների նշանաբանն ու լոզունգը

«Բանվոր դասակարգի ազատագրման պայքարին, պատրաստ» պատասխանը «Մշտ պատրաստ ենք»։

Հիմնական լոզունգը «Proletarier aller Länder vereinigt euch!» խարինում ենք»։

Ц.Б.Ч. Ц.С.Р.А Публичная Библиотека
7/XI. 1922
Мясникяна Ս.Ս.Հ.Յ.Ի Ա.Ն.Վ.

## XIV Պիոների նշանը

Ս. Խ. Հ. Մ.-ի պիոներական կազմակերպությունների համար, հաստատվում է հետևյալ միասնական նշանը՝ կարմիր դրոշակի վրա, մուրճ և մանգաղի մեջ հինգ փայտի վրա վառվող խարույկ բոցի յերեք լեզվակներով։ Մանգաղի վրա գրված է «պատրաստ»։

## XV Արտաքին հատկանիշները

Բոլոր պիոներները և հոկտեմբերիկները զգեստավորվում են միատեսակ. վերնաշապիկը բաց գույնի, տղաները կարճ տրուսիկներ, իսկ

աղջիկները մուգ գույնի շրջազգեստ մինչև ծունկները։

2. Բոլոր պիոներները և հոկտեմբերիկները կրում են կարմիր վզկապ։

3. Ղեկավարները և առանձին պիոներները ուրիշ նշան և կամ ուրիշ հատկանիշներ չեն կրում։

4. Ոգակը ունի կարմիր գույնի յերեք անկյունանի դրոշակ, վորի մեկ յերեսին նկարված է ոգակի սիմվոլը (հեղափոխական ղեկավարների նկարը կամ հեղափոխական-աշխատանքային նշանը), իսկ մյուս յերեսին գրված է այսինչ կոլեկտիվի ոգակ։

5. Կոլեկտիվը ունի քառանկյունի կարմիր դրոշակ, վորի մեկ յերեսին նկարված է պիոներական նշան և գրված է նշանաբանը։ Իսկ մյուս յերեսին կոլեկտիվի անունը և վոր ձեռնարկության կից («Արարատ գործարանին կից «26-ի» անվան կոլեկտիվ)։

6. Այդպիսի դրոշակ ունի նաև գավառի ամբողջ կազմակերպությունը։

## XVI Պիոներների և հոկտեմբերիկների բարևը

1. Հաստատվում է բարևի հետևյալ ձևը։



Աջ ձեռքի 5 մատը միացած բարձրացվում է գլխից վեր։

5 մատը աշխարհի մասերն են, ուր կան շահագործվողներ և վորոնց ազատագրման համար պիոներները պայքարում են։

Գլխից բարձր է, վորովհետև պրոլետարիատի շահերը բարձր են պիոներների անհատական շահերից։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
ԵՐԵՎԱՆ, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.

4

ՀՀ Ազգային գրադարան
NL0187473